



Global Program to Prevent Son Preference and the Undervaluing of Girls
Տղաների նախապատվության եւ աղջիկների թերարժեքման
կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագիր

POLICY BRIEF
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

This Policy Brief was produced by International Center for Human Development with the financial assistance of the European Union in the frame of “Global Program to Prevent Son Preference and the Undervaluing of Girls” implemented by UNFPA. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union and/or UNFPA.

Համառոտագիրը պատրաստվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «Տղաների նախապատվության և աղջիկների թերարժեքման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում: Սույն փաստաթղթի բովանդակությունը որևէ կերպ չի արտացոլում Եվրոպական միության և/կամ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետները:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական
 միության կողմից
 This project is funded by the EUROPEAN UNION



**Հայաստանի
Հանրապետությունում պտղի
սեռի խտրական ընտրության և
սեռով պայմանավորված
հղիության արհեստական
ընդհատման կանխարգելման
ուղղված իրավական
կարգավորման բարելավման
խնդիրները**

Համառոտագիր



Մարդկային
գարգացման
միջազգային
կենտրոն

2013 թվականին Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը հանձնարարական-ուղերձ ուղղեց պտղի սեռի խտրական ընտրության հիմնախնդրին բախված մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանին: Հանձնարարականում, մասնավորապես, առաջարկվում էր քայլեր ձեռնարկել խնդրի իրավական կարգավորման և արքորի իրականացման ընթացակարգերում փոփոխություններ կատարելու, այդ թվում՝ սելեկտիվ արքորտները օրենսդրորեն արգելելու ուղղությամբ:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄՉՄԿ), Եվրոպական Միության և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ 2015թ. մշակվեց և ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով հաստատվեց «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017թթ. միջոցառումների ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին փոփոխություններ կատարվեցին «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածում (Հղիության արհեստական ընդհատումը (արքորը) և ամրագրվեցին մեխանիզմներ՝ ուղղված անցանկալի հղիությունների և մասնավորապես սելեկտիվ արքորտների կանխարգելմանը:

ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ լրացում կատարվեց նաև Վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքում, որով օրենսդրությամբ թույլատրվող հղիության արհեստական ընդհատման գործընթացում բուժաշխատողների կողմից օրենքով սահմանված պահանջների խախտման դեպքերի համար նախատեսվեց վարչական պատասխանատվություն:

Օրենսդրական փոփոխությունների ընդունումից հետո, դրանց իրականացումն ապահովելու նպատակով, ՀՀ կառավարությունը 2017թ.ընդունել է «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 180-Ն որոշումը, որով փորձ է արվել հստակեցնել հղիության արհեստական ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումները, սահմանել են առանձին պահանջ-պայմաններ:

Հաջորդիվ, վերը նշված բոլոր իրավական ակտերը առողջապահության նախարարության կողմից շրջաբերական նամակով ուղարկվել են ծննդօգնության ծառայություններ մատուցող բոլոր բժշկական կազմակերպություններին և նրանց հիմնադիրներին՝ «ի կատարումն» հանձնարարականով:

2018 թվականի ընթացքում խնդրի իրավական կարգավորմանն ուղղված ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությունների կիրարկման վերաբերյալ առանձին դիտարկումներ և փորձագիտական գնահատականներ են հնչեցվել, այդ թվում՝ կատարողականի անբավարար արդյունավետության վերաբերյալ: Նշվել է նաև, թե ընդհանուր ընթացակարգերի բացակայությունը գործընթացի տարամեկնաբանության և դրա առանձին բաղադրիչների՝ տարբեր բուժհաստատություններում տարբեր կերպով կազմակերպման պատճառ են դառնում: Ավելին, մինչ այժմ հաստատված չէ նոր օրենսդրությունից բխող Հղիության արհեստական ընդհատման բժշկական քարտի միասնական ձևանմուշը, ինչը նախատեսված է ՀՀ կառավարության որոշմամբ: Առանձին հասարակական կազմակերպություններ և գործող իշխանությանը մոտ կանգնած



Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org



ակտիվիստներ բազմիցս բարձրաձայնել են, թե նոր օրենսդրությունից բխող մի շարք դրույթներ և դրանց իրավական կարգավորումների անկատարությունը հղիների համար ստեղծում է դժվարություններ՝ թե՛ ծառայությունների մատչելիության և կանանց իրավունքների երաշխավորման, թե՛ կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, ակնհայտ է, որ ներկայում իրավական կարգավորման գործող համակարգը, դրա կիրարկման գործող պրակտիկան գնահատման և վերլուծության կարիք ունի:

Իրավական կարգավորման և դրա կիրարկման պրակտիկայի վերաբերյալ որոշակի գնահատականներ է պարունակում 2018 թվականի դեկտեմբերին ՄՉՄԿ հրապարակած Հայաստանի Հանրապետությունում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման գեկույցը: Այդուհանդերձ, խնդրին անհրաժեշտ է անդրադառնալ նաև առանձին հետազոտության շրջանակներում:

Մշտադիտարկման ընթացքում քաղաքականության մշակման մի շարք պատասխանատուներ նշել են, մասնավորապես, նոր օրենսդրությունից բխող հղիության արհեստական ընդհատումների միասնական կազմակերպական ընթացակարգի սահմանման, հղիության արհեստական ընդհատումների բժշկական քարտի ձևաթղթի և դրա լրացման կարգի հաստատման անհրաժեշտությունը՝ Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված իրավական կարգավորումների բարելավման նպատակով:

Ընթացակարգի ներդրման կատարողականի և բուժաշխատողների գիտելիքների և խորհրդատվական հմտությունների բարելավումը, ինչպես նաև նրանց վարքագծային փոփոխությունները կարող են պտղի սեռի խտրական ընտրության և սելեկտիվ արբորտների կանխարգելման լրացուցիչ գործոն լինել և նպաստել ծրագրի դրական արդյունքների շարունակականության ապահովմանը:

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «Տղաների նախապատվության և աղջիկների թերարժեքուման կանխարգելմանը ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում: